ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,


**29 սեպտեմբեր 2021թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 65-րդ հոդվածի 1-ին մասի և 67-րդ հոդվածի 1-ին մասով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Արամ Վարդևանյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը,

Խնդրում ենք օրենքների նախագծերի ներկայացված փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**Հարգանքով՝**

ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

Նախագիծ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248-Ն քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասում «307» բառից հետո լրացնել «307.5» բառը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

նախագիծ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝307.5 հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 307.5 Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովներին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը

1. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը՝
   պատժվում է՝ ազատազրկմամբ հինգից յոթ տարի ժամկետով:
2. Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը՝
   պատժվում է ազատազրկմամբ՝ութից տասներկու տարի ժամկետով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 307.5 Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովներին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը

1. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը՝
   պատժվում է՝ ազատազրկմամբ հինգից յոթ տարի ժամկետով:
2. Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը՝
   պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

## Հիմնավորում

## Նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

**Նախագծի ընդունման նպատակը.**

Նախագծով առաջարկվում է քրեականացնել Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովներին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը: Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովները և նրանց գործունեությունը երաշխավորված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքով: Առհասարակ, քննիչ հանձնաժողովները խորհրդարանական կառավարման համակարգի և խորհրդարանական վերահսկողության կարևորագույն գործիք են: ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, **Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով**, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:» Սահմանադիրը, նշելով հանրային հետաքրքրություն տերմինը, արդեն իսկ կանխորոշել է, որ դրանք խիստ կարևոր և առանցքային հարցեր պետք է լինեն, ինչով պայմանավորված էլ առաջանում է բացառապես ճշմարտությունը բացահայտելու առաքելությունը, որն էլ, սակայն անհնարին կլինի առանց ճշմարիտ փաստերի և դրանց օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրության: Հատկանշական է, որ հենց այս նպատակով էլ ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1 և 1.1 մասերի համաձայն՝

1. Քննիչ հանձնաժողով հրավիրված պաշտոնատար անձինք **պարտավոր են**, իսկ հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձինք իրավունք ունեն ներկայանալու և բացատրություններ տալու հանձնաժողովի նիստում, ինչպես նաև պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցերին:

1.1 Սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձանց՝ հանձնաժողով ներկայանալու և բացատրություններ տալու, ինչպես նաև հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականությունը պահպանվում է նաև նրանց պաշտոնից ազատվելուց հետո, եթե տեղեկատվության տրամադրման պահանջը կամ նիստին ներկայանալու և բացատրություններ տալու հրավերն ստացվել է մինչև պաշտոնից ազատվելը:

Մինչդեռ ինքնին ներկայանալու իմպերատիվ պահանջը ինքնին բավարար չէ ճշմարտության բացահայտման և ներկայացման համար. Հիփոթեզի և դիսպոզիցիայի առկայության դեպքում բացակայում է համապատասխան սանկցիան, որը քննիչ հանձնաժողովի կողմից հրավիրված անձանց ոչ միայն կստիպի ներկայանալ հանձնաժողովին, այլև ներկայացնել միմիայն և բացառապես ճշմարտությունը: Հակառակ դեպքում քննիչ հանձնաժողովների գործունեությունը կվերածվի իրականությունից և հանրային հետարքրության շրջանակում գտնվող հարցերից շեղելու գործիքի:

Միաժամանակ, տարբերակում է դրվել քննիչ հանձնաժողովներին և Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ տրամադրելու միջև, ինչը պայմանավորված է կրկին Սահմանադրության և Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի ինպերատիվ և տարբերակիչ մոտեցումներով: Մասնավորապես՝ պաշտպանության և անվտանգության հարցերին վերաբերող դեպքերում քննիչ հանձնաժողով չի ստեղծվում, այլ դրա լիազորությունները **փոխանցվում են Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին**: Հատկանշական է, որ այս դեպքերում չի փոխվում նաև հանձնաժողովի կազմը:

Տարբերակման մյուս հիմնավորումը այն հարցերի շրջանակն են, որոնք ենթակա են քննության պաշտպանության և անվտանգության իրավասու հանձնաժողովի կողմից՝ դրա քննիչ հանձնաժողովի լիազորություններ ստանձնելու դեպքում: Պայմանավորված այդ հարցերի ոչ միայն հանրային, այլև պետության, դրա անվտանգության և պաշտպանության տեսանկյունից կարևորության, նպատակահարմար է սահմանել առավել խիստ սանկցիա այդ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ տրամադրելու դեպքերի համար, ինչը կունենա պրեվենտիվ նշանակություն հնարավոր հանցավոր վարքագծի նկատմամբ և միաժամանակ կնպաստի արդարության և իրականության ամբողջական և համակողմանի ուսումնասիրությանն ու բացահայտմանը: Պատահական չէ նաև, որ նման նախաձեռնություն իրականացվում է այս ժամանակահատվածում և նախկինում նման առանցքային անհրաժեշտություն առաջացած չի եղել: Պատճառը 2020 թվականի սեպտեմբերի 27-ից, մինչև 2020 նոյեմբերի 9-ը տեղի ունեցած 44-օրյա պատերազմն էր և դրա հանգամանքների համակողմանի ուսումնասիրման վերաբերյալ հայտարարված քննիչ հանձնաժողովի ձևավորման հանգամանքն է: Պետք է նկատել, որ նշված պատերազմի արդյունքում Հայ ժողովրդի հազարավոր Հերոս զինվորական ծառայողներ մարտիրոսվել են, սակայն հանրության մեջ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ նշված պատերազմից հնարավոր էր խուսափել, կամ հնարավոր էր ավելի վաղ դադարեցնել որի պայմաններում զոհված, թշնամու կողմից սպանված զինվորների կյանքը հնարավոր կլիներ փրկել և կանխել նման իրավիճակը: Այս հանգամանքների վերաբերյալ ցանկացած ոչ հավաստի կամ ոչ լրիվ ճշմարիտ, առավելևս սուտ կամ կեղծ տեղեկություններ հայտնելը նման պայմաններում իրենից ներկայացնում են չափազանց բարձր հանրային վտանգավորության աստիճան որով պայմանավորված է հենց քրեական քաղաքականության նման խիստ մոտեցումը: Պատահական չէ, որ 44-օրյա պատերազմի հետևանքների կամ դրանից «դասեր քաղելու» կարևորության մասին նշվում է նույնիսկ կառավարության ծրագրի մեջ, հետևաբար կանխատեսելի է, որ նման նախաձեռնության և բացառապես ճիշտ և իրական տեղեկության ստացումը պետք է լինի ելակետային բոլոր կողմերի համար: Գտնում ենք, որ քրեական քաղաքականության նման մոտեցումը կարող է միակ արդյունավետ մեխանիզմ և երաշխիքը հանդիսանալ հատկապես Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի գործունեության հանրային վստահության և ճշմարտության բացահայտման առաքելության իրացման տեսանկյունից:

Միաժամանակ, պայմանավորված այդ արարքների հանրային վտանգավորությամբ և սուբյեկտային առնչությամբ, անհրաժեշտ է տվյալ գործերի համար նախաքննության մարմին սահմանել ազգային անվտանգության մարմնի քննիչներին, քանի որ ամբողջ իրավահարաբերություններն ուղղակիորեն փոխկապակցված են ՀՀ ազգային անվտանգության հետ:

**Նախագծով առաջարկվող փոփոխությունները**

Նախագծով առաջարկվում է քրեականացնել Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը և այդ արարքի կատարման համար նախատեսել հինգից յոթ տարի ժամկետով ազատազրկումը՝ որպես պատիժ, ինչպես նաև սահմանել 8-12 տ ազատազրկում, եթե կեղծ կամ սուտ տեղեկություններ տրամադրվել են պաշտպանության և անվտանգության բնագավառներում գործող քննիչ հանձնաժողովին:

Նախագծի փաթեթով՝քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված լրացմամբ առաջարկվում է սույն գործերով նախաքննության մարմին սահմանել ՀՀ ազգային անվտանգության մարմիններին:

**Նախագծով նպատակը**

Նախագծի ընդունման դեպքում հնարավորինս կնվազի քննիչ հանձնաժողովներին և դրանցից առանձնահատուկ կարգավիճակ և կանոնակարգումներ ունեցող պաշտպանության և անվտանգության ոլորտի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկությունների տրամադրումը, ինչով էլ քննիչ

հանձնաժողովների աշխատանքը և զեկույցը կլինի հանգամանալից և ճշմարտացի՝ արտահայտելով բացառապես իրական և փաստերի վրա հիմնված օբյեկտիվ իրականությունը, իսկ դրանից շեղվելու փորձեր կատարողները, այդ թվում միջամտության, կեղծ կամ սուտ տեղեկության տրամադրման մասով կենթարկվեն քրեական պատասխանատվության, դրանով իսկ ապահելով նման արարքների կանխարգելման քրեաիրավական նպատակը:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 190. Քննչական ենթակայությունը**

1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-164, 166-187, 190.1, 190.2, 191, 192, 195-201, 204, 212-214, 218, 222, 223, 223.1, 223.2, 223.3, 223.4, 225, $225^{1}$, 226.2, 227-232, 235-249 (բացառությամբ 235.1 հոդվածի), 251-298 (բացառությամբ 267.1 հոդվածի), 300, 300.1, 300.2, 301, 301.1, 307.1, 307.2, 307.3, 307.4, 308-328 (բացառությամբ 310.1 հոդվածի), 331-332.5, 336, 341, 341.1, 341.2, 343-$345^{1}$ , 347-355 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները։

2. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188, 189, 189.1, 193, 194, 202, 203, 205 (բացառությամբ մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործության), 207-211 և 216.1 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի կամ հարկային մարմինների քննիչները։ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205 հոդվածով նախատեսված՝ մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները։

3. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 189.1, 190, 217, $217^{1}$ , 219-221, 224, 226, 226.1-ին, 233, 234, 250, 299, 302-307,<u>307.5</u> 329, 329.1, 330, 384-$397^{1}$ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները։

4. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215.1, 215.2, 235.1 և 267.1 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները։

5. Նախաքննությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային զինվորական ծառայության զինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոմսերի կառավարման լիազորությունը հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները։

5.1

6. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-րդ, 150-րդ, 154. 1-ին, 154. 2-րդ, 154. 9-րդ, 310.1-ին, 314.2-րդ, 314.3-րդ հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները։

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք չեն առնչվում պետական ծառայություն իրականացնող անձանց պաշտոնեական դիրքի հետ կապված հանցագործություններին, կամ որոնցով սույն մասի առաջին պարբերությունում թվարկված անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե նախաքննական այլ մարմնում դրա քննության ընթացքում թույլ են տրվել խախտումներ, կամ առկա են այլ հիմքեր, որոնք կասկածի տակ են դնում նույն մարմնում այդ գործի հետագա քննության բազմակողմանիության, լրիվության ու օբյեկտիվության պահպանման հնարավորությունը։

6.1. Նախաքննությունը հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները։

6.2

7. Սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերով նախատեսված գործերով նախաքննություն կատարում է այն մարմինը, որը հարուցել է տվյալ քրեական գործը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի։

8. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 128, 165, 200, 208, 209, 216, 308-310, 314, 315, 333-335, 337-340, 342, 345 և 346 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում է նախաքննության այն մարմինը, որի վարույթում գտնվող գործի քննության ընթացքում բացահայտվել է այդ հանցագործությունը, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերում նշված անձանց կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի։

9. Ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները 188, 189, 205, 206, 235, 263, 266, 268, 271, 272, 275 և 325 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են նախաքննություն, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի։

10. Տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու կամ գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է դատախազը։ Այս կարգը չի տարածվում սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի վրա, որոնցից 6-րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են բացառապես հատուկ քննչական ծառայության քննիչները, իսկ 6.1-ին մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննիչները։

***(պարբերությունն ուժը կորցրել է 19.05.14 ՀՕ-28-Ն)***

11. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-ին գլուխներին համապատասխան ձևակերպված՝ քրեական գործերով

իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումները նախաքննության մարմինները կատարում են սույն հոդվածով նախատեսված քննչական ենթակայությանը համապատասխան:

Սույն հոդվածով չսահմանված քննչական ենթակայության դեպքում հարցման կատարման ենթակայության հարցը որոշում է դատախազը: